ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քրեստոմատիա. հայ գրականությունից անգիր հանձնարարվող նյութեր 9–10–րդ դասարանցիների համար (կազմողներ Հ. Զաքարյան և Յու. Ավետիսյան), Եր., «Զանգակ–97» հրատ., 2007, 176 էջ:

Սա «Զանգակ–97» հրատարակչության ձեռնարկած «Դպրոցական մատենաշարի» առաջին գիրքն է:

Գիրքը պարունակում է հիմնականում չափածո այն ստեղծագործությունները կամ դրանց հատվածները, որոնք ընդգրկված են «Հայ գրականություն» առարկայի դպրոցական ծրագրերում:

Դրանք հայ դասականների և բանահյուսական ստեղծագործություններ են՝ սկսած Գողթան երգերից և Մովսես Խորենացուց մինչև Յակոբ Սահյան ու Պարույր Սևակ: Այս բոլորի սկզբնաղբյուրները հայթայթել–գտնելը մեծ ջանքեր և ժամանակ էր պահանջում դպրոցականից: Խիստ կարիք էր առաջացել ամփոփելու այդ նյութերը մեկ ոչ ստվարածավալ գրքի մեջ: Այդ կարիքը բավարարելու նպատակ ունի գրախոսվող ժողովածուն:

Գրաբար երկերի մի մասը տրված է բնագրով և զուգահեռ թարգմանությամբ, մյուս մասը միայն աշխարհաբար թարգմանությամբ:

Դպրոցականներին անհասկանալի որոշ օտար, հին, բարբառային և գրքային բառեր ու բառակապակցություններ լուսանցքում (երբեմն տողատակում) բացատրված են առավելապես հոմանիշներով: Թե բառը (բառակապակցությունը), թե դրա բացատրությունը գունավորված են, որ դյուրացնում է օգտվողի գործը:

Յու. Ավետիսյան և Հ. Զաքարյան, Հայոց լեզու. հնչյունաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն, ուս. ձեռնարկ բարձր դաս. աշակերտների և բուհ ընդունվողների համար («Դպրոցական մատենաշար»), Եր., «Զանգակ–97» հրատ., 2007, 144 էջ:

Դպրոցի ավարտական նոր քննակարգով մեր կրթական համակարգում արմատավորվում է ստուգման հարցարանային (թեստային) եղանակը: Սինչդեռ մեր մանկավարժների գինանոցում, գործող դասագրքերում և ձեռնարկներում գերիշխում են ավանդական ոճով կազմված վարժություններն ու առաջադրանքները, որոնք ունեն ավելի շատ ուսուցողական, քան ստուգողական բնույթ: Իսկ 4–րդ դասարանում հնչյունաբանություն և ուղղագրություն անցած աշակերտը դպրոցի ավարտական քննության պատրաստվելու գրեթե այլ հնարավորություն չունի, քան ինքնուրույն պարապմունքները, քանի որ տասնամյա կրթության առաջին գործող ծրագրերով՝ «Հայոց լեզու» առարկայի այդ բաժիններին միջին և բարձր դասարաններում բավարար անդրադարձ այլևս չի նախատեսվում: Այդ բացը լրացնելու նպատակ ունի գրախոսվող ձեռնարկը:

Գրքի առանցքային բաժինը ստուգողական վարժություններն են: Դրանց նախորդում է տեսական նյութի սեղմ շարադրանքը՝ գործնական բնույթի բացատրություններով, ցուցումներով, հրահանգներով: Ամեն ենթաբաժին ավարտվում է ուսուցողական վարժություններով, որոնք նույնպես մեծ մասամբ հարցարանային եղանակով են կազմված:

Ձեռնարկին կցված է բառացանկ, որն ընդգրկում է ուղղագրական առավել դժվարություն ներկայացնող 1000 բառ:

Հ. Զաքարյան և Յու. Ավետիսյան, Հայոց լեզու. բառագիտություն. ուս. ձեռնարկ բարձր դաս. աշակերտների և բուհ ընդունվողների համար («Դպրոցական մատենաշար»), Եր., «Զանգակ–97» հրատ., 2007, 264 էջ:

Գիրքն ունի գիտելիքների ստուգման նոր՝ հարցարանային եղանակի ներդրմանը նպաստելու, «Հայոց լեզու» առարկայից գործնական պարապմունքներ անցկացնող ուսուցչին և ինքնուրույն պարապող աշակերտին այդ եղանակով մշակված լրացուցիչ նյութեր տրամադրելու և իբրև ձեռնարկ ծառայելու նպատակ:

Տեսական նյութի սեղմ, բայց ամբողջական շարադրանքին՝ գործնական բնույթի բացատրություններով, ցուցումներով, հրահանգներով, հաջորդում են ստուգողական վարժությունները, որոնք կազմված են հարցարանային եղանակով:

Ձեռնարկին կցված են բառացանկեր:

Դրանցից առաջինն ընդգրկում է առավել գործածական դարձվածքների և շրջասույթների ընտրանի: Շրջասույթները գունավորված են:

Երկրորդն ընդգրկում է համանունների ընտրանի: Համահունչ և համագիր բառերը գունավորված են, իսկ ուղիղ փակագծերում տրված է դրանց արտասանությունը (հնչադարձումը):

Երրորդն ընդգրկում է հապավումների ընտրանի՝ համապատասխան բառակապակցություններով: Տառային հապավումները գունավորված են:

Չորրորդն ընդգրկում է նորաբանությունների ընտրանի: Բացատրություններից հետո ուղիղ փակագծերում, տրված են դրանց օտար համարժեքները, եթե հայերեն խոսքում հանդիպում են իբրև օտարաբանություններ:

Յու. Ավետիսյան և Հ. Զաքարյան, 600+ թեստային առաջադրանքներ հայ գրականությունից և ոճաբանությունից. ուս. ձեռնարկ բարձր դաս. աշակերտների և բուհ ընդունվողների համար («Դպրոցական մատենաշար»), Եր., «Զանգակ-97» հրատ., 2007, 168 էջ:

Դպրոցի ավարտական «Հայոց լեզու և գրականություն» (գրավոր) քննության հարցարանի նմուշներում հատուկ տեղ ունեն հայ գրականությանը և ոճաբանությանը վերաբերող առաջադրանքները: Դրանք կառուցվածքով և մեթոդաբանությամբ նորություն են թե դպրոցականների, թե մանկավարժների համար: Մինչդեռ գործող դասագրքերում և նույնիսկ ամենանոր ձեռնարկներում գերիշխում են ավանդական ոճով կազմված վարժություններն ու առաջադրանքները, որոնք ավելի շատ ուսուցողական, քան ստուգողական բնույթ ունեն: Այդ բացը լրացնելու նպատակ ունի սույն ձեռնարկը:

Գիրքը բեն կազմված է միայն ստուգողական վարժություններից, սակայն ոճաբանությունից տեսական նյութ անուղղակիորեն տրված է պատկերավորման-արտահայտչական միջոցների (դարձույթների և բանադարձումների) բնորոշումների իմացությունը ստուգող առաջադրանքների ձևով (ոճաբանական առաջադրանքների առաջին բաժին): Այդ բաժնի առաջադրանքների առաջնահերթ լուծումը նպաստում է մյուսների լուծմանը նախապատրաստվելուն:

Ձեռնարկը բաղկացած է հայ գրականությանը և ոճաբանությանը վերաբերող բաժիններից: Հավելվածում տրված են առաջադրանքների պատասխանները:

Հ. Ա. Գալստյան, Ճիշտը և սխալը, բառագործածության, բառածևի և կապակցական սխալները հայերենում, ուս. ձեռնարկ բարձր դաս. աշակերտների և բուհ ընդունվողների համար («Դպրոցական մատենաշար»), Եր., «Զանգակ-97» հրատ., 2007, 96 էջ:

Գրքում մատնանշվում ու պարզաբանվում են հայերեն խոսքում առկա բառագործածության, բառածևի ու կապակցական առավել հատկանշական սխալները և դրանցից խուսափելու միջոցները:

Ձեռնարկում հիմնականում ներկայացված են այն սխալները, որոնք որոշակի դժվարություն են հարցում ոչ միայն դպրոցականի համար: Դրանց թվում կան գրական կանոնը խախտող լեզվական այնպիսի շեղումներ, որոնք խիստ տարածվածության պատճառով «անտեսանելի» են լինում անգամ բավարար գրագիտություն ունեցողների համար: Դրանք, ըստ հարկի, ուղեկցված են համապատասխան օրինակներով՝ ճիշտն ու սխալը ցուցադրելու նպատակով:

Բացատրական մասին հաջորդում են ստուգողական վարժությունները: Այնուհետև տրված են դրանց պատասխանները: Գրքի վերջում զետեղված առարկայական ցանկն օգնում է գտնելու անհրաժեշտ բառը կամ արտահայտությունը:

Գիրքը հասցեագրված է ոչ միայն աշակերտներին ու դիմորդներին, այլև ուսանողներին, ուսուցիչներին և բոլոր նրանց, ովքեր ուզում են նվազագույնի հասցնել կամ վերացնել իրենց խոսքում պատահող լեզվական սխալներն ու անճշտությունները:

Լ. Եգեկյան, Ոճագիտության ուղեցույց, ուս. ձեռնարկ բարձր դաս. աշակերտների և բուհ ընդունվողների համար («Դպրոցական մատենաշար»), Եր., «Զանգակ-97» հրատ., 2007, 120 էջ:

Գրքում համառոտ և մատչելի շարադրանքով ներկայացված են դպրոցական ծրագրով նախատեսվող ոճագիտության մի շարք հիմնահարցեր, ինչպիսին են ոճերի դասակարգումը, հնչյունների, բառերի ոճական արժեքը, բառապաշարի ծնաիմաստային խմբերի ոճական կիրառությունները, լեզվի պատկերավորման ու արտահայտչական միջոցները: Օրինակները հիմնականում բերված են հայ գրողների գեղարվեստական ստեղծագործություններից և հայալեզու մամուլից:

Բացի տեսական նյութից յուրաքանչյուր բաժնում տրված են համապատասխան գործնական վարժություններ և առաջադրանքներ: